

ՄԱՍ 8. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հաշվետու ժամանակահատվածում պետական վիճակագրության ոլորտում իրականացված՝ Եռամյա և տարեկան ծրագրերով նախանշված և այլ միջոցառումները ֆինանսավորվել են հետևյալ հիմնական աղբյուրներից.

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջե. Նախատեսվել է ընդամենը 4 126 889.1 հազար դրամ, այդ թվում ըստ տարիների՝ 2010 թվականին՝ 951 422.5 հազ. դրամ, 2011 թվականին՝ 2 111 663.9 հազար դրամ և 2012 թվականին՝ 1 063 802.7 հազար դրամ, հատկացվել է ընդամենը՝ 3 991 265.1 հազար դրամ, այդ թվում ըստ տարիների՝ 2010 թվականին՝ 911 163.4 հազար դրամ, 2011 թվականին՝ 2 039 253.2 հազար դրամ և 2012 թվականին՝ 1040848.5 հազար դրամ, հատկացումը նախատեսվածի նկատմամբ կազմել է 96.7%, այդ թվում ըստ տարիների՝ 2010 թվականին՝ 95.8%, 2011 թվականին՝ 96.6% և 2012 թվականին՝ 97.8%:

2. Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհներ. Դրամաշնորհային միջոցներով իրականացված ծրագրերի ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվել է ընդամենը՝ 430 054.5 հազար դրամի, այդ թվում ըստ տարիների՝ 2010 թվականին՝ 80 214.5 հազար դրամի, 2011 թվականին՝ 324 884.5 հազար դրամի, 2012 թվականին՝ 24 955.5 հազար դրամի չափով: